

2.2 ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՍՎԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ոչ առևտրային կազմակերպությունների ընտրանքային հետազոտության ընթացքում հավանական սխալները նվազագույնի հասցնելու նպատակով անհրաժեշտություն էր առաջացել ձևավորել համապատասխան միավորների ամբողջական գլխավոր համակցություն, որից էլ կկատարվեր հետազոտության համար կազմակերպությունների ընտրությունը:

Այդ նպատակով ՀՀ ԱՎԾ-ն դիմել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վարչություն՝ ՀՀ գրանցված հասարակական միավորումների, հիմնադրամների և իրավաբանական անձանց միությունների (ոչ առևտրային կազմակերպությունների) վերաբերյալ պետական գրանցամատյանում առկա տեղեկատվության (անվանում, գրանցման համար, գտնվելու վայր, հիմնադիրներ (ըստ ռեզիդենտության) և այլն) ստացման նպատակով:

ՀՀ արդարադատության նախարարությունից ստացված տեղեկատվությունը զետեղված էր հետևյալ 5 առանձին բազաներում.

- ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված հասարակական կազմակերպությունների ցուցակ,
- ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված կուսակցությունների ցուցակ,
- ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված իրավաբանական անձանց միությունների ցուցակ,
- ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված հիմնադրամների ցուցակ,
- 2001 թ. օգոստոսից սկսած ՀՀ պետական ռեգիստրում գրանցված հասարակական միավորումների, իրավաբանական անձանց միությունների, հիմնադրամների ցանկ (ըստ 10.09.2002թ. դրությամբ պետական միասնական գրանցամատյանում առկա տեղեկությունների):

Հինգ տարբեր բազաներով տեղեկատվության տրամադրման հիմնական պատճառն այն էր, որ նախկինում ոչ առևտրային կազմակերպությունների գրանցումը իրականացվում էր առանձին գրանցամատյաններում՝ հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների, հիմնադրամների և իրավաբանական անձանց միությունների համար, իսկ սկսած 2001թ. կեսից գրանցումներն իրականացվում են մեկ միասնական գրանցամատյանում:

Ընդհանուր առմամբ, տրամադրված բազան ներառում էր 4180 ոչ առևտրային կազմակերպություն: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հետազոտությունն անցկացվելու էր 2001թ. ֆինանսական արդյունքների վերաբերյալ տվյալներ ստանալու նպատակով, հետազոտության համար կիրառելի էր 3137 ոչ առևտրային կազմակերպություն ներառող բազան: Այսպես, մինչև 2001 թվականի կեսը գրանցված ոչ առևտրային կազմակերպությունների քանակը, ըստ տրամադրված բազաների, կազմում էր 2960, իսկ միասնական գրանցամատյանում՝ 1220, որից, սակայն, մինչև 2002 թվականը՝ միայն 177 կազմակերպություն: Հարկ է նշել, որ վերը նշված քանակները ներառում են նաև կրկնահաշվարկ, քանի որ տարբեր ժամկետներում իրականացվել են արդեն իսկ գրանցված կազմակերպությունների վերագրանցումներ: Այդ նպատակով փորձ է կատարվել հնարավորինս չեզոքացնել այդ հանգամանքի ազդեցությունը վերջնական միասնական գլխավոր համակցություն ձևավորելիս:

Աղյուսակ 1-ում ներկայացված է հետազոտության համար գլխավոր համակցություն հանդիսացած ոչ առևտրային կազմակերպությունների քանակն ըստ խմբերի:

Աղյուսակ 1

Հետազոտության գլխավոր համակցությունը

1	Հասարակական կազմակերպություններ	2592
2	Հիմնադրամներ	230
3	Իրավաբանական անձանց միություններ	31
4	Կուսակցություններ	107
5	Միասնական գրանցամատյան (2001թ.-ից)	177
6	Գրանցված արհեստակցական կազմակերպություններ	159
		329
	Ընդամենը	6

Վեցերորդ խումբը կազմում էին արհեստակցական կազմակերպությունները, որոնց վերաբերյալ որոշվել է տեղեկություններ ստանալ դրանց հանրապետական 26 ճյուղային միություններից, ինչը կապահովեր նաև այս ոլորտի վերաբերյալ համատարած տեղեկատվության հավաքագրումը: Նշվածը հիմնավորվում էր նաև այն հանգամանքով, որ, համաձայն գործող օրենսդրության, բոլոր արհեստակցական կազմակերպությունները պետք է առանձին գրանցվեն ՀՀ արդարադատության նախարարությունում, որի գործընթացը սկսվել է հենց 2001 թվականից և դրանց մեծ մասը դեռևս չէր հասցրել գրանցվել (մինչև 2002 թվականը գրանցվել է ընդամենը 159 արհեստակցական կազմակերպություն):

Ձևավորված բազաներից առանձնացվել են հավանական առավել մեծ ծավալ ունեցող 114 կազմակերպությունները (ներառյալ արհեստակցական կազմակերպությունների 26 ճյուղային միությունները), որոնք հետազոտվել են համատարած:

Այսպիսով, ընտրանքի համար գլխավոր համակցությունը կազմել է 3049 կազմակերպություն (աղյուսակ 3):

Աղյուսակ 2

Համատարած հետազոտության համար առանձնացված կազմակերպությունների համակցությունը

Հասարակական կազմակերպություններ	49
Հիմնադրամներ	11
Իրավաբանական անձանց միություններ	3
Կուսակցություններ	22
Միասնական գրանցամատյան (2001թ. կեսից)	3
Արհեստակցական կազմ. ճյուղ. միություններ	26
ԸՆդամենը	114

Աղյուսակ 3


Պատահական ընտրանքի իրականացման համար գլխավոր համակցությունը

Հասարակական կազմակերպություններ	2543
Հիմնադրամներ	219
Միություններ	28
Կուսակցություններ	85
Միասնական գրանցամատյան (2001թ. կեսից)	174
	304
ԸՆդամենը	9

Ելնելով հետազոտության ֆինանսական և մարդկային ռեսուրսների սահմանափակությունից, ինչպես նաև հաշվի առնելով ընտրանքի ներկայացուցչականությունն ապահովող նվազագույն պահանջները՝ ընտրանքի չափը որոշվել է ընդունել 692 միավոր:

Ընտրանքի նշված չափն ըստ գլխավոր համակցության խմբերի բաշխվել է յուրաքանչյուր խմբի մեջ առկա կազմակերպությունների քանակին համապատասխան: Այլ կերպ ասած, կիրառվել է միջազգային վիճակագրական պրակտիկայում ընդունված ընտրանքային, այսպես կոչված, «հավանականությունը չափին համապատասխան» մեթոդը (PPS)՝ յուրաքանչյուր խմբի ներսում պատահական ընտրանքի կիրառմամբ:


Ընդհանուր առմամբ, հետազոտվել են 805 ոչ առևտրային կազմակերպություններ (աղյուսակ 4), որոնց բաշխվածությունն ըստ մարզերի և կազմակերպությունների խմբերի բերվում են հետևյալ գծապատկերներում՝



1. Երևան	2. Արագածոտն	3. Արարատ	4. Արմավիր
5. Գեղարքունիք	6. Լոռի	7. Կոտայք	8. Շիրակ
9. Սյունիք	10. Վայոց Ձոր	11. Տավուշ	

Գծապատկեր 1.

Ոչ առևտրային կազմակերպությունների ընտրանքային համակցության բաշխումն ըստ մարզերի



1. Հասարակական կազմակերպություններ
2. Հիմնադրամներ
3. Իրավաբանական անձանց միություններ
4. Կուսակցություններ
5. Միասնական գրանցամատյան (2001թ. կեսից)
6. Արհեստակցական կազմ. ճյուղ. միություններ

Գծապատկեր 2.

Ընտրանքային համակցության բաշխումն ըստ կազմակերպությունների խմբերի

Աղյուսակ 4

Հետազոտման ենթակա ոչ առևտրային կազմակերպությունների համակցությունը

Հասարակական կազմակերպություններ	625
Հիմնադրամներ	61
Իրավաբանական անձանց միություններ	10
Կուսակցություններ	41
Միասնական գրանցամատյան (2001թ. կեսից)	42
Արհեստակցական կազմ. ճյուղ. միություններ	26
Ընդամենը	805